

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

22 հունվարի 2016 թ.

N 10-Ն

## Հ Ր Ա Մ Ա Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի N 28-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Սերմերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով.

#### *Հրամայում եմ*

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2006 թվականի փետրվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում օգտագործման և հետագա բազմացման նպատակով գրանցված բույսերի սորտերի ցանկը հաստատելու մասին» N 28-Ն հրամանի հավելվածի՝

#### **1. «Սոյա» բաժնում**

«Ամֆոր» տողից հետո լրացնել «Գամմա» տողով.

#### **2. «Գետնանուշ» բաժնում**

«Կրասնոդարեց 13» տողից առաջ լրացնել «Լիա» տողով.

#### **3. «Կարտոֆիլ» բաժնում**

- 1) «Գալա» տողից հետո լրացնել «Գալատա» տողով.
- 2) «Մարանկա» տողից հետո լրացնել «Մարտինա» տողով.
- 3) «Վիրգո» տողից հետո լրացնել «Վոլումիա» տողով.

#### **4. «Պոմիդոր» բաժնում**

- 1) «Զուրաբ» տողից հետո լրացնել «Էլիպս F1» տողով.
- 2) «Դեղնակտուց» տողից հետո լրացնել «Եվա» տողով.
- 3) «Ռեդչիֆ» տողից հետո լրացնել «Ռենեսանս» տողով.
- 4) «Վերեդ» տողից հետո լրացնել «Փարվանա 452» տողով.

#### **5. «Սմբուկ» բաժնում**

«Վալենտինա» տողից հետո լրացնել «Վարդերես» տողով.

#### **6. «Սեխ» բաժնում**

«Գովական» տողից հետո լրացնել «Ոսկե գունդ» տողով.

7. «Դմիկ» բաժնում  
«Էսկանդերանի» տողից հետո լրացնել «Ջարթոնք» տողով.
8. Բրոկկոլի բաժնից հետո լրացնել նոր բաժիններ՝ հետևյալ բովանդակությամբ.  
«Կաղամբագոնգեղ-կոլրաբի  
**B. o. varietas gongyloides L. (B.o.var. caulorapa Pasq.)**  
Շանթ.  
Հազար  
**Lactuca sativa**  
Կանաչ գանգուր.  
Մանուշակ».
9. «Խնձորենի» բաժնում  
«Ռենետ Սիմիրենկո» տողից հետո լրացնել «Սիմա» տողով:

Նախարար՝

Ս. Կարապետյան